

ջեն) Հոս է, այդ երկարհասակ վարդերն աղջիկն է:

Բ. Գիւղացի - (Տոպրակէն պտուղներ հանելով) Առէք, խնդրեմ, կերէք շատ համով են:

Խիկար - Խաղա մի՛ խանդարեր կոշտ գիւղացի, յետոյ թող ուտեն:

Գայիանէ - Աղջիկներ, ներս քաշուեցէք: Քոյր Հոսի, կոշնակը զարկ (Քոյր Հոսի-սիմէ կոշնակը կը հնչեցնէ):

Շողիկ - Քիչ մ'ալ կենանք, Մեծաւոր Մայր:

Աշխէն - Շատ զուարճալի է:

Շուշանիկ - Ես աճալարար բնաւ չեմ տեսած:

Հոսիսիմէ - Ասիկա սատանան է. խաչ հանեցէք երեսնիդ (Ինքը երեսը կը խաչակնի): Յանուն Հօր եւ...:

Խիկար - (Խսկոյն վրայ բերելով) Ո՛չ, բարե քոյրիկ (Թեւերը բանալով) ո՛չ, ես ոսկրով, կաշիով եւ միտով մարդ եմ:

Գայիանէ - Նե՛րս քաշուեցէք. հիմա դուրսէն ուրիշներ ալ կու գան:

Ջարուհի - Մեզ չեն ուտեր որ...:

Փառանձեմ - Վախճալու բան չկայ:

Բոլորը - Քիչ մ'ալ կենանք, քիչ մ'ալ:

Գայիանէ - (Մեկուսի) Ի՛նչ ընենք, յաճախ ստիպուած ենք կամքերնին կատարել. շատերը սարերու եզնիկ են, ազատ կենանքի վարժած, ապա թէ ոչ՝ փախուստ կու տան:

Խիկար - Այս խաղը վերջինն է. ամէնէն հետաքրքրականը: Մա չուանը... դուն... դուն... (Մատով մէկիկ մէկիկ ցոյց կու տայ աղջիկները) դուն կրնա՞ս բռնել (Կանգ կ'առնէ Շուշանիկին առջեւ):

Շուշանիկ - Ինչո՞ւ չէ, կրնամ բռնել (Կը բռնէ չուանի ծայրէն):

Խիկար - Քիչ մը հեռու գացէք, բացուեցէք, զիս պիտի խեղդէք (Աղջիկները կը լայնանան: Շուշանիկին վրայ խորհրդաւոր ձեւեր կ'ընէ ձեռքերով) Ատիճաղ, պատիճաղ... կապեմ, պլլեմ...: (Դառնալով Շուշանիկին) Հիմա քեզ պիտի կապեմ, պիտի պլլեմ չուանով, հանդոյց ալ պիտի ընեմ եւ դուն մէջէն դուրս պիտի ելլես առանց չուանները քակելու: Բայց, բայց զլխուն վրայ լաթ մը պէտք է ձգել (Կամացուկ մը գիւղացիներուն) պատրաստ եղէք: Մեծաւոր Մայր, քու զգեստը շատ լայն է, կտոր մը տուր:

Գայիանէ - Անպատկառ:

Ջարուհի - Հո՛ս, իմ լողիկս առ:

Խիկար - (Կապկպելով Շուշանիկը) Պատրաստ եղէք: Մէկ... երկու... երեք...

Ա. Գիւղացին - (Որ հուժկու մէկը պէտք է ըլլայ, Շուշանիկին ուսին վրայ առած՝ իսկոյն բեմէն դուրս կը խոյանայ: Իրեն կը հետեւի միւսը՝ լքելով իրենց տոպրակները):

Գայիանէ - Ձիւնը գլխուս. հասէ՛ք, հասէ՛ք: Պահակներ: Հոսի, կոշնակը զարկ: Պահակներ...:

Խիկար - (Ցատկրտելով գիւղացիներուն ետեւէն դուրս կը խոյանայ) Լեփոյ լէ, լէ. լեփոյ լէ, լէ...:

Վարագոյրը կ'իջնէ

(Շարունակելի)

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

• Գ Բ Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն •

ՀԱՅՈՑ ԳԻՐԸ - Հեղինակ՝ Կ. Տիրատուրեան, 1963, Երեւան:

Հայպետհրատի լոյս ընծայած այս հատորը՝ նոյն մարդին մէջ լաւագոյնը կալիլ է նկատել:

148 էջերէ բաղկացած այս գիրքը, հայկական գեղարուեստական գրերու եւ գրականութեան շուրջ 400 տեսակներով կը ներկայանայ, ընտիր եւ դուռնաւոր տպագրութեամբ, քիչ մը հաստիկեկ ու հասարակ թուղթի վրայ:

Հեղինակը, խիստապէս ճարտար եւ ճշկուն ձեռքով արուեստագէտ մը, յաջող կերպով գիտցած է կեանք, երանդ եւ աշխատանքին տալ, պահելով հանդերձ հինին խորքը՝ Սուրբ Մեսրոպի, Խորենացիի, Նարեկացիի եւ մինչեւ մեր օրերու մշակութային երեւոյթներէն իւրաքանչիւրն իր մեկնաբանութեամբ, իր բնոյթով եւ իր առանձնաշատկութիւններով ցուցադրելու. Հայաստանի ծերունի վարպետը, Մարտիրոս Սարեան, որ ստորագրած է գրքին յառաջաբանը, կը գրէ. «Տառերու ուրուագծերուն մէջ բովանդակութիւն մը կայ՝ որ թէ՛ խօսուին է եւ թէ՛ համոզուին»:

Ողջունելի աշխատանք մը, պատուաբեր՝ հեղինակին եւ հրատարակիչներուն, եւ որ կը մաղթենք՝ սկիզբը ըլլայ շարքի մը:

* * *

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԱՏԼԱՍ - Երեւան - Մասկուա, 1961, էջ 12, 8°:

Հայ իրականութեան մէջ եթէ զոյու-թիւն ունենար տարուան հրատարակութիւնը վարձատրող մրցանակ մը, 1961ին համար՝ անտարակոյս՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԱՏԼԱՍին պիտի չնորհուէր:

Պատուաբեր հրատարակութիւն մը արգարեւ, վայել՝ ակադեմական Հաստա-

տութեան մը, որ հազիւ քսանամեայ է տակաւին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԱՏԼԱՍը հայ գիտութեան պատմութեան մէջ առաջին ընդհանուր աշխարհագրական եւ քարտիսագրական ստեղծագործութիւնն է, որ իր մէջ կը պարունակէ համեմատական զանազան մեծութիւններով՝ իրարու հետ տրամաբանական կարգով մը չափապաշար 150 քարտէս, բացատրական ծանօթութիւններով:

Յառաջաբանին մէջ կը կարդանք. «Հայկական ՍՍՌ առաջին աշխարհագրական Ատլասը ընդհանուր գիտատեղեկատու քարտէսագրական աշխատութիւնն է, որ կը պատկերացնէ Հայաստանի բնութիւնը, վարչական բաժանումը, բնակչութիւնը, տնտեսական եւ մշակութային բարգաւաճումը եւ նաեւ Հայաստանի պատմութիւնը»:

Հինգ հիմնական բաժիններէ կը բաղկանայ:

Առաջինը ներածութիւն մըն է, ուր տրուած են Կովկասի եւ Հայկական ՍՍՌի վարչական քարտէսները:

Երկրորդ բաժինը Ատլասի ամենաաւելու հատուածն է. կ'ընդգրկէ Ֆիզիքական, երկրաբանական, կլիմայական, երկրագործական, ջրագրական, հողագրական, բուսական եւ կենդանական աշխարհի, ոյժերու զանազան աղբիւրներու եւ բնաշխարհագրական գօտիներու եւ շրջաններու 74 քարտէսներ:

Երրորդ բաժինին մէջ, 12 քարտէսներով, տրուած է բնակչութեան եւ մշակութային շինարարութեան բաշխումը՝ Հայաստանի մէջ:

Չորրորդը տնտեսական քարտէսներու բաժինն է, ուր գետեղուած են 48 քարտէսներ:

Վերջին մասին մէջ, 10 քարտէսներով, համառօտ ակնարկ մը կը տրուի Հայոց պատմութեան, սկսելով Ուրարտուէն մինչեւ մեր ներկայ Հայաստանը:

Հոգեկան անխառն վայելք մըն է մեզի համար, որ կ'ապրինք հայրենիքի կարօտով, նկատելը թէ՛ ինչպէս այս փոքրիկ

Հայաստանը, որ 0,13րդ մասը, այսինքն չուրջ 1 հազարերորդը կը կազմէ Սովետական Միութեան, մեզի կը ներկայանայ այնքան դրաւիչ հանդերձանքով մը, պարզելով իր քարտէսներուն մէջ՝ մինչեւ այսօր մեզի անյայտ մնացած դադանքները:

«Կենտեզիա ի քարտիքափիա» դիտական հանդէսը իրաւացիօրէն անոր բովանդակութիւնը, պատկերացումին մեթոտները եւ ձեւաւորումին որակը՝ Սովետական քարտիսագրութեան մէջ ակնառու նուաճում մը կը նկատէ:

Թիւերու, քարտէսներու, աղիւսակներու իրերայաջորդ միապաղպղ էջերուն ընդմէջէն հետզհետէ զօրացող ուրախութեան զգացում մը կը բարձրանայ, կը համակէ հայուն էութիւնը բովանդակ. կը լսես հիանալի մեղեդիներ անցեալ փառքի յուշարձաններուն, մեր սուրբ նախնիքներուն հաւատքին, եւ երգը՝ ներկայ կառուցումին եւ շինարարութեան, որ կը հնչէ Հայրենիքի լեռներուն ու դաշտներուն, քաղաքներուն ու գիւղերուն մէջ անխորի:

Թող ներուրի ինծի անդրադարձնել՝ որ 1959ի ընդհանուր վիճակագրութեան հիման վրայ կազմուած այս Ատլասը կարող էր մեզի աւելի մանրամասն տուեալներ տալ Սովետական Միութեան մէջ ցրուած հայերու թիւին, տեղաբաշխումին, կրթական եւ մշակութային դործունէութեան, վերջապէս այն ամէն ինչի մասին՝ որ այնքան լաւ կերպով ներկայացուած է հատորիս երրորդ բաժինի 12 քարտէսներուն մէջ, նկատմամբ Հայկական ՍՍՌի: Պատմական քարտէսներու մասը, զբոյրն վերնագրին հետ ուղղակի կապ մը չունենալով, իր ներկայ վիճակով՝ աւելի կը նպաստէ նուազեցնելու անոր ակադեմիական բնուէրը, Ատլասին տալով ընտանեկան համայնագիտարանի մը բնոյթը. ընդհակառակն, աւելի ճշխարհելով եւ անջատելով դայն ներկայ հատորէն՝ կ'ունենանք «Պատմական Հայաստան»ի Ատլաս մը, որուն յայտնութիւնը, անտարակոյս, շատ մեծ խանդա-

վառութեամբ պիտի ողջունուի համայն հայութեան կողմէ:

Հայաստանի Գիտ. Ակադեմիայի այս պատուարեր դործը, անդրադոյն ակնկալութեան յոյսերով կը լեցնէ մեր սրտերը:

Հ. ՅԱՐՈՒԹԻԻՆ ՊԶՏԻԿԵԱՆ

* * *

ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ – Տաղիկներ Սիրոյ եւ Կարօտանաց: Պատրաստեցին Շուշանիկ Նազարեան եւ Ասատուր Մնացականեան: Ութաձալ, լաքակալմ, էջք 286: Երեւան, 1958:

Շահեկան եւ արժէքաւոր աշխատութիւն մըն է այս հատորը, որ Մարտիրոսեանի «Մարտիրոս Ղրիմեցի»ի աշխատութեան հետ՝ մեր մատենագրութեան մէջ վաղուց զգացուած կարեւոր պակաս մը կը լեցնէ:

Պաղտասար Դպիր ծնած 1683ին եւ մեռած 1768ին, մեր դրական վերածնունդին կարեւոր ռազմիրաններէն մէկն է: Ան մեղի թողուցած է ոչ միայն դրական ժառանգութիւն մը, այլ նաեւ ուսուցիչ եղած է ԺԸ. դարու մատենագրական եւ հասարակական ակնաւոր եւ արժէքաւոր դէմքերու, որպէս են Պետրոս Վ. Ղափանցի, Սիմէոն կաթողիկոս Երեւանցի, Յարութիւն Կարնեցի, Պետրոս Բերթումեան, Բարսեղ Կեսարացի եւ ուրիշներ, որոնք մեծապէս ներշնչուած են իրենց սիրելի ուսուցիչէն:

Շուշանիկ Նազարեան եւ Ասատուր Մընացականեան ընտիր աշխատութիւն մը կու տան մեզի Պաղտասար Դպիրի մասին ներկայ հատորով: Իրաւ է որ անոնք զբոյրաւորարար նկատի ունին Պաղտասար Դպիրը իր աշխարհիկ բանաստեղծ: Ասիկա սակայն առաջին քայլն է դէպի Պաղտասար Դպիր՝ իր մեծ ազգային հասարակական դործիչ. եւ երբ օր մը պարզուին այժմ մութ ծաղկերը Պաղտասար Դպիրի կեանքին մանրամասնութիւններուն մասին, եւ ներկայացուի անոր վա-

տակը իր ուսուցիչ, իր հայագէտ, իր բարոյագէտ, այն տառն Պաղտասար Դպիր մեզի պիտի ներկայանայ իր խոշոր առաջնորդ մը մեր ԺԸ. դարու մտաւոր շարժումին:

Ներկայ աշխատութիւնը, ինչպէս ըսինք, նուիրուած է մասնաւորաբար Պաղտասար Դպիրի տաղիկներուն: Էջ 5էն կը սկսի ՆԱՍԱՐԱՆ, ուր կարեւոր դիմերով կը ներկայացուի Պաղտասար Դպիր: Իրաւացի է արժէքաւորումը որ հոս կը տրուի. «Պաղտասար Դպիրը եղել է պոլսահայ ազգային կեանքի առաջնորդութեան հետ կապուած ամէն մի նախաձեռնութեան դործարար, արդիւնաւոր մասնակիցը» (էջ 5):

ՆԱՍԱՐԱՆին մէջ տրուած Պաղտասար Դպիրի կեանքին ու դործունէութեան վերայ կրնամ փոքր տեղեկութիւն մըն ալ աւելցնել: Սարգիս Դպիր Սարաֆ Յովհաննէսեան՝ Էջմիածնի նուիրակ Դանիէլ Վրդ.ի մասին խօսած տառն՝ կը վկայէ որ Պաղտասար Սր. Միքայէլ Հրեշտակապետի եկեղեցւոյն մէջ, «վախճանեցաւ ի ժանտացաւ, ի թուականին Հայոց ՌՃՂԶ ի Նոյմ. ութն, եւ յամի Տ(եառ)ն 1747, եւ թաղեցաւ փառաւորապէս, եւ տապանաքար նորին չքեղացեալ է ի դերեզմանաւ անդ, զորոյ ոտանաւորն շինեալ է անուանի Դպիրն Պաղտասար, եւ զվր նորին դրեալ, Ռաֆայէլ հանճարեղ պատկերանկար»: Բժիշկ Թորոյմեան կը վերկայէ, որ «այս շիրիմը կը կենայ տակաւին իտիրնէ Գարուի Գերեզմանատունը, ինչպէս անձամբ տեսայ զայն»: (Ստամբուլի Պատմութիւն, Վիեննա, 1913, էջ 332):

Բժիշկ Թորոյմեան հոն կը հրատարակէ նաեւ զժուարաւ կարգացուած այս 24 տողոց տապանաղիրը Պաղտասար Դպիրի գրչէն:

ՆԱՍԱՐԱՆին մէջ մեզի կը տրուի նաեւ Պաղտասար Դպիրի հրատարակուած դործերուն: Թող ներուրի մեզի եթէ ըսենք, որ այս տպուած դործերուն մատենագրական նկարագրութիւնը պէտք է ըլլար աւելի կատարեալ. մեծութիւն,

տիպոգրֆի էջ, եւն. կատարեալ ներկայացում՝ չունին:

Տաղարաններու նկարագրութեան շարքին՝ յիշեմ որ ներկայացուած թիւ 17 «Տաղարան Անխորադիր»էն օրինակ մըն ալ կայ իմ հաւաքմանս մէջ: Երկու երեք չորրորդ բաժնաւորով չորս բաժնաւոր մեծութեամբ, զբոյժազարդ, չափանկագոյն կաշկարատ խաւաքարտեայ կազմով հատորիկ մըն է: Նազարեանի եւ Մնացականեանի ձեռքի տակ գտնուած օրինակը կ'երեւի թէ պակասաւոր եղած է: Կը վերկայուի որ «Տաղարանից ընկել են 119-122րդ թերթերը. ուստի այս (69) տաղի վերջին մասը եւ յաջորդ 70, 72րդ տաղերը չկան» (էջ 280): Արդ, առնելով իմ տաղարանէս՝ կ'ամբողջացնեմ պակասող տաղերուն խորագիրները:

70 «Վ(ա)ս(ն) ճշմարիտ Սիրելւոյ»:

71 «Տաղ ի դիմաց Ծերունեաց առ Խոհեմ Մանկունան»:

Սակայն ինչ որ աւելի կարեւոր է, Նազարեանի եւ Մնացականեանի դործածած օրինակը չէ ունեցած տիպոգրֆի էջ, որ կը գտնուի իմինիս սկիզբը, զոր կու տամ հոս.

«ՏԱՂԱ

ՐԱՆ

Փոքրիկ:

գանազան գու

նով ասացեալ

ի Պաղտասար

դպրէ:

արդէն առ տ(է)ր

հանգուցելոյ»:

Իսկ զարդագծով բաժնուած տիպիկ մը մէջ, էջին տակը

«Որոյ գիտցին Տ(է)ր Ա(ստուա)ծ լուսաւորեցէ: Ամէն»:

Ուրեմն, մենք կրնանք բացարձակապէս հաստատ կերպով ըսել որ այս տաղարանը հրատարակուած է 1768էն վերջ: Պաղտասար Դպիր մեռաւ 1768ին: Նազարեան եւ Մնացականեան տարրեր հաշուով նոյն եղրակացութեան հասած են արդէն: Անոնց ձեռքը գտնուած օրինակին մէջ պակսեր է նաեւ վերջին թերթը: «Վերջից